

ԹԱՆԱՍԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Հայտնի է, որ Ամենայն Հայոց Հայրապետ նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեղրդ Զ. սովորել է էջմիածնի Հոգևոր Ճեմարանուամ, Մեծի Տանն Կիլիկիու Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Վեհափառի: Հետ: Նրանք միասին են ավարտել Հոգևոր Ճեմարանը և միասին էլ սարկավագ ձեռնադրվել Կարապետ Տ.-Մկրտչյանի հետ (հետագայում եպիսկոպոս): Նրանց հետ է եղել նաև իրենց տեսուչը:

Նրանց ձեռնադրության կապակցությամբ իրենց ուսուցիչներից մեկը՝ Մ. Արքակիսկոպոս Օրմանյանը, որ Հայաստանյայց նկեղեցու հեղինակավոր դեմքերից մեկն է, երկտող-շնորհավորական է ուղարկել Գարեգին Կաթողիկոսին (այն ժամանակ սարկավագ): մեծ նշանակություն տալով այս եռյակի, իրենց տեսչի հետ, եկեղեցական ասպարեզ մտնելում: Օրմանյանը, իրեն հատուվ խորաթափանցությամբ, գուշակել է այն մեծ հեռանկարը, որ ովհին նորընծա սարկավագները եկեղեցական ասպարեզուամ: Սոտորէ բերում ենք Օրմանյանի շնորհավորական երկտողը:

Մյուս վակերագիրը, որ նմանապես հրատարակում ենք ներկա հոգվածում, այդ Գեղրդ Կաթողիկոսի (այն ժամանակ վարդապետ) մի բացիկն է ուղղված Գարեգին Կաթողիկոսին (այն ժամանակ վարդապետ):

Գեղրդ վարդապետն իր այդ բացիկում խորհուրդ է տալիս իր մտերիմ ընկերուջը՝ Գարեգին վարդապետին, Հրաժարվել ընդունելու Հոգևոր Ճեմարանի տեսչությունը: Նա միաժամանակ հայտնուած է իր հայցեցակետը՝ Ճեմարանի վերակառուցման խնդրուած:

Հրատարակող երկու փաստաթղթերն էլ գալիս են նորից Հաստատելու այն իրողությունը, որ Հայ եկեղեցու ներկա երկու հովապետները, իրենց բացառիկ ընդունակություններով և անբասիր վարդապետվ, մեծ հեղինակություն են ունեցել իրենց երիտասարդ շրջանից: Այդ փաստաթղթերը միաժամանակ ցուց են տալիս, որ Հայ եկեղեցու այդ աշքի ընկնող դեմքերը, սկսած իրենց ուսանողական շրջանից, բացառիկ մտերմական կապերով են կապված եղել իրար հետ:

Թերիա

29 յունիս 1889

ՍԻՒՐԵԼԻ ԻՄ ԳԱԼՐԵԳԻՆ
ԲԱՐԵՇՆՈՐԾ ՍԱՐԿԱՒԱԴ ՄԱՅՐ ԱԹՈՒԻՑ

Ապրիս Գարեգինս.

Դուք ալ եկար լրացնելու խորեղաւորիք և խորեղաւոր խումբը: Իմ աշխատութեանս ժամանակին երեք խումբեր կամ դասեր ունեցաց ինձ աշակերտ, և որոց վրայ շանցի գործել ինչ որ կարող էի, ինչ որ պարագաները կը ներէին: Առաջին խումբը — երրորդ լսարանցոցն էր և անոնցմէ շորսը ընդունեցան ուստի պահպանիչը: Այլ պարագայք փոխունցան, միտքեր փոփոխունցան և գործեր այլափոխունցան: Վերջին ժամանակ երեք էին, որ Ձեր արժանապատիւ տեսչին շուրջը բոլորեալ, ոչ «պահպանիչ»: այլ «Անսուածային և երկնային շնորհը կ'ընդունի՛ և երեք խորեղաւոր բիւր կը կազմե՛ երեք խումբերէ մի մի ճախրենծաներ, Կարապետն ու Գեղրդը և դուք: Երեք խումբերն ալ կը մտնեն ուրիշն գործոյն, և ես

վստահ եմ թե իւրաքանչիւր խմբի ճախրենծաներն ալ նետնողներ պիտի ունենան:

Գալով ։ Ի խմբիո, ո՞հ, կը յիշեմ նախ և առաջ Տէօվլէքեանի և Թառումեանի վաղահաս վախնանը: Աստուած լուսավորէ նոցահոգին: Սակայն մնացելոց մէջ ալ հոգով կը տեսնեմ դիմողներ և առաջին կը ներկայանայ իմ մտաց աշքին Տէր Յովհաննիսինեանը և ոչ նեռու՝ Համբարձումյանը, և այլն ըստ կարգի: Սակայն երէ երրորդ լսարանցին ալ աւարտելով ընդունին ուրարին լծան ծանրութիւնը, ոչինչ չունիմ ըսելիք:

Առաջին առին ձեզ երիցունցդ մի մի լուսնակար կը յեմ, շուտով և ձերը ունենալու փակիագանօֆ:

Ողջոյն ամենայն սիրելեաց և առաջին լսարանցդ, որոց դու պետ, աստիճանալ ալ գլուխ ես նշանակուած:

Համբուրի ճակատու մեամ
Մ. Արքեպիսկոպոս Օրմանեան

(Հայկ. ՍՍՌ Մատ. Արխիվային բաժին,
բդր. № 95, վագ. № 2):

31 մարտի 1915 թ.
Նոր-Նախիչևնի

Սիրելի ԳԱՐԵԳԻՆ.


Իմացայ, որ քեզ առաջարկում են ձեմա-
րանի տեսչութիւնը. ինձ բառ է, թէ անպայ-
ման պիտի առնես, երէ առողջութիւնը նե-
րում է աշխատել: էջմիածնի կարիքները
մենք աւելի մօս ենք ըմբռնում, քան որևէ
նոյն պատրաստութիւն ունեցող աշխար-
հական: Այլ հարց էր, երէ ունենայինք բառ
ամենայնի պատրաստի պրոֆեսորներ, ո-
րոնք, յիշափ, ձեմարանը ընդունակ լինեին
դարձնելու բարձրագոյն դպրոց:

Երէ յանձն առնես, շնորհանաւ երկու բան,

ֆակուլտետներ դարձնել՝ ֆակելով դպրոցա-
կան բաժինը, և երկրորդ՝ նորա իրավական
գոյուրեան խնդիրը: Դժբախտութիւն է, որ
մենք պատրաստի ուսուցիչներ չունենք և
առանց օտար ուժերի անկարող ենք կառա-
վարուել:

Առանց տեսնելու նեռանալու պատճառը՝
ու ուսարկած գրեթե էին, և այն լուրը, որ
կու այդ օրը զնացած ես եղել Երևան: Գր-
քերիդ համար շնորհակալութիւն, իսկ շտե-
նուելու համար ներղութիւն:

Ք Պ Գ Ե Կ Ո Վ Ա Ր Դ Ա Վ Ե Ս
(Հայկ. ՍՍՌ Մատ. Արխիվային բաժին,
բղ. № 95, վալ. № 452):



Օրմանյան Մթքանի Գարեգին Սարկավագին ուղարկած
համակի առաջին էջը